

ԲԵՐԿՈՒՆԵՐԻ ՄԱՅՈՒՆԵՐԸ

**ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՈՒՏԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԸ**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

20 հունիսի

Թրքանճյան ընտանիքին

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին՝ Զերալդ եւ Փատրիսիա Թրքանճյանների (Լոս Անջելես, ԱՄՆ) զավակներ Լորի Մալեթյան-Թրքանճյանին, Փոլ ու Հարրի Թրքանճյաններին եւ Նրանց ընտանիքներին՝ ուղեկցությամբ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովհան արք. Տերտերյանի։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրինությունն ու գնահատանքը փոխանցեց Թրքանճյան ընտանիքին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից իրականաց-

գործունեությունը, անդրադարձ կատարեց Հայոց եկեղեցու առջեւ ծառացած արդի մարտահրավերներին՝ ի մասնավոր խոսելով խնարհված սրբավայրերի վերականգնման եւ Նոր Եկեղեցիների կառուցման անհրաժեշտության, ինչպես նաեւ եկեղեցականների պատրաստության մասին։

Վերջում Լորին Սրբությունը գնահատանքով ընդգծեց, որ հալածակ առկա բազում կարիքների, շնորհիվ Մայր Աթոռի աշխարհասփյուռ հավատավոր զավակների գորակցության, որոնց թվում է Թրքանճյան ընտանիքի, հնարավոր է

25 հունիսի

ԱՄՆ հայոց արեւմտյան եւ արեւելյան թեմերի ուխտավորներին



տաղանցության առաջնորդելու հանձնառությունը, կարելու էր եւական նկատել այսպիսի այցելությունների կազմակերպումը՝ լշեղով, որ որակեք հնարավորություն են ընծառում աշխարհի տարբեր երկրներում հաստատված հայորդիներին անձնապես ճանաչելու հայրենիքը, ինչպես նաեւ խանդավառում ու ոգեշնչում են հայրենաբնակ ժողովրդին։

Ողջունելով նաեւ ԲԱԸՄ-ի ամառային մասնագիտական փորձառության ծրագրի մասնակիցների այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Հայոց Հովվապետ անդրադարձ կատարեց Հայ եկեղեցու առաջնությունը պատանի կյանքում, կարեւորեց երիտասարդության ամուր կապը եկեղեցու հետ եւ մասնավորապես ներգրավվածությունը

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում հանդիպում ունեցավ ԱՄՆ հայոց արեւմտյան եւ արեւելյան թեմերի ուխտավորների հետ՝ ուղեկցությամբ խմբի ղեկավարներ Տաթև ավգ քին, Հայրությունյանի (Կուպերտոնի) Ս. Անդրեաս եկեղեցի) եւ Հակոբ քին, Գեորգյանի (Ֆիլադելֆիայի Ս. Երրորդություն եկեղեցի)։ Հանդիպմանը ներկա էին նաեւ ԲԱԸՄ-ի Երեսնի ամառային մասնագիտական փորձառության ծրագրի մասնակից 29 երիտասարդ։

Տաթև եւ Հակոբ բախանալով Վեհափառ Հայրապետին փոխանցեցին ուխտավոր հայորդիների Հայաստան կատարած ուխտագնացության վառ տպավորությունները։ ԲԱԸՄ-ի երիտասարդների պատասխանատուն, իր հերթին, Լորին Սրբությանը ներկայացրեց իրականացվող ամառային ծրագրի մասնակիցներին եւ ծրագրի առանձնահատկությունները։

Այնուհետեւ ներկայներին իր օրինությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Լորին Սրբությունը բարձր գնահատեց հոգեւոր հովիվների ծառայությունը եւ հայորդիներին հայրենիք ու-



եկեղեցական բազմատեսակ ծրագրերում։ Վերջում Վեհափառ Հայրապետն ամենքին մաղթեց հաճելի օրեր անցկացնել հայրենիքում եւ զորացած իրենց ինքնությանը եւ հայրենասիրության ու ազգասիրության ջերմ գգաշունչներով՝ վերադառնալ իրենց բնակավայրերը։

Ուխտավորները Մայր տաճարում մասնակցեցին Պատարագի, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ։



վող հոգեւոր-կրթական ծրագրերին ցուցաբերվող գորակցության, ինչպես նաեւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի գործունեությանը մշտապես աջակցելու համար։

Չորույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը Թրքանճյան ընտանիքին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից կրթական եւ սոցիալական ոլորտում իրականացվող լայնածավալ

դառնում կյանքի կոչել ազգօգուտ ու հայրենաշեն բազում ծրագրեր եւ ամրապնդել լավատեսությունը գալիքի նկատմամբ։ Վեհափառը գիտնականությամբ առանձնացրեց Թրքանճյան ընտանիքի հոգածությամբ Հառիճի վանքում հիմնված համաժողովրդական եւ վանքի հիմնական խորհրդականն ու բարեկարգմանն ուղղված ընդարձակ ծրագիրը։

Ս. Շողակարի վանքի ուխտի օրվա արարողությունը

Հունիսի 15-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնավաճեց Ս. Հովհաննես Կարապետի եւ Ս. Աթանազիոս Եպիսկոպոսի տոնը, որը նաեւ Էջմիածնի Ս. Շողակարի վանքի ուխտի օրն էր։

Այս առիթով, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ, Մայր Աթոռի ավանդատուն-թանգարանից դուրս բերվեց եւ Ս. Շողակարի վանք տարվեց Ս. Հովհաննես Մկրտչի մատուցել ամփոփող խաչ-մատուցարանը։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մատուցակիր թափուրը դեպի վանք ուղղվեց՝ հոգեւորականներին եւ հավատացյալներին բազմությամբ։

Ժամը 11:00-ին վանքում մատուցվեց Պատարագ, որի ավարտին կատարվեց նաեւ Աղոթատանի արարողությունը։

Կաթողիկոս Ս. Էջմիածնի տունը

Հունիսի 18-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Նշեց Կաթողիկոս Ս. Էջմիածնի տունը։

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարագույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ միաձնաէջ Մայր տաճարում մատուցվեց Պատարագ։ Պատարագին էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպ. Բաբայանը։

Պատարագի արարողությանը ներկա էին Հայաստանյան թեմերի առաջնորդները, Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսները եւ միաբանները, ինչպես նաեւ Հայ եկեղեցու բարերարներ տեր եւ տիկին՝ Պետրոս եւ Աննա Օրունգադինները (ԱՄՆ), Սփյուռքից ու Հայաստանի տարբեր համայնքներից ժամանած բազմաթիվ ուխտավորներ։

Պատարագի ընթացքում Մուշեղ սրբազանը մասնավոր անդրադարձ կատարեց տոնի խորհրդին։ «Աստված հայոց հողին էլ իջավ, սրբացրեց այն եւ բնակվեց այնտեղ։ Ոսկե ուռամբ հաստատեց «սուրբ գիտրան լուսոյ», եւ այդ հայտնության ու եկեղեցու հիմնարկեցի պանծալի հիշատակության համար այսօր համայն աշխարհից հավաքվել ենք Նրա սրբարար կամարների ներքո» փոքր եւ մեծ, արք եւ կանայք, պաշտոնյա եւ սպասավոր։ 1714-րդ տոնն է այսօր քրիստոսահիմն Կաթողիկոս Ս. Էջմիածնի։ Բացառիկ է այն եւ խորախորհուրդ, պարզեւ եւ ընծա արդքի, ջարդացած տեսիք. Աստուծո այցելության անշնչելի հետք եւ խարանված կնիք ի վերա դաշտին Այրարատյան։ Լուսակառույց այս սրբավայ-

րի հիմքեր ջրիեղելը հաղթանարած ապառաժներն են, որի վրա սուրբ Լուսավորչի ձեռամբ, Նրա սուրբ Աջով օրհնվեց եւ հաստատվեց տերու-նապատվեր «Աթոռը քահանայապետական» իբրեւ Մայրը հայոց բոլոր եկեղեցիների։ Արդ, ավետարանական պատմով նման, հողով եւ մորիկ, փոթորկուտ մարտահրավերները սարափելի էին, քանիզ հավասրեց վնի վրա էր կառուցվել սրբազնատուր մեր եկեղեցին»,- ասաց պատարագի սրբազանը։

Մուշեղ սրբազանի իր քարոզում շեշտեց, որ հալածակ պատմության ընթացքում Մայր Աթոռին բաժին ընկած տառապանքներին ու փորձություններին՝ այն միշտ վեր է հանել իր հավատավոր զավակների շնորհիվ, որոնց անսակարկ սերն առ Էջմիածինը մղել է իրենց գոհողությունների։ «Սերը, գործվանքն ու նվիրումն առ Սուրբ Էջմիածինն անափելի են, անկշռելի եւ անգնահատելի։ Մեզանից ոմանք սիրում են իրենց մշտական աղոթքով՝ Նրա անսասանության համար, ոմանք իրենց սերն արտահայտում են սրտաբուխ եւ կամ առատաձեռն նվիրատվությամբ՝ Նրա շենության ու պայծառության համար։ Ոմանք էլ իրենց սերը փոխանցում են Նրանց, ում պատմում են իրաշագործ Նրա գործության ու փառքի մասին՝ տարածելով ամենուր սուրբ տաճարի աստվածահաստատ հռչակը։

Այսօր էլ ապրում է Սուրբ Էջմիածինը, սիրելի՜ հավատացյալներ, ձեզ եւ ձեր նախնիներին հետ։

Շարունակությունը՝ էջ 2

Կարթոլիկն Ս. Էջմիածնի տունը



Սկիզբը՝ էջ 1

Ձեր հավատքի շնորհիվ, ձեր աղոթքների ուժով է, որ քարտեռն շինվածքից այն դարձել ու մտնում է աղոթքի տուն եւ սնող մայր»,- լեզու արձագան հայրը: Այս կապակցությամբ Մուշեղ սրբազանը հորդորեց ներկայիս իշման սուրբ Սեդակի առջեւ ուխտել հաճախ այցելել Սուրբ Էջմիածին, գորհախալ նրանով եւ գորհա-

անորինակ պատմության ընթացքում իբրեւ սիրատուն մայր սնեց եւ որպէս ամուր վահան պահպանեց մեզ՝ հասցնելով 21-րդ դար»,- եզրափակեց սրբազան հայրը:

Մուշեղ սրբազանը ներկայիս անունից շնորհավորեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ցանկանալով նրան արգասաբեր հովվապետության երկար տարիներ:



նել նրան, ապրել ու շնչել Էջմիածնով, շենաց-նել այն եւ պայծառնալ հայոց եկեղեցիների Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով:

«Ազգեր եղան եւ գնացին անհետ: Արհաւիրք-ներ բարձրացան, բայց Քրիստոսի հավատքի փարված մեր հայրը ազգը հայրով եւ Էջմիած-նում բարձրացված Հայրապետական ու Հան-րապետական մարդկանցների գործությամբ դի-մակայեց: Էջմիածին է, որ դարձրեւ ի վեր մեր

Պատարագի սրբազան արարողության ա-վարտին, Ամենայն Հայոց Հայրողիկոսի հանդի-սապետությամբ, կատարվեց Ս. Էջմիածնի մարթնան: Ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառության ու անսասնության համար:

Մայր տաճարում տեղի ունեցավ նաեւ հոգե-հանգստյան արարողություն՝ Օրումնագծից գե-րաստանի ննջեցյալների լույս հիշատակի համար:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2016-2017 ուսումնական տարվա փակման արարողությունը

Հունիսի 24-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայ-րագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջ-միածնում տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2016-2017 ուսումնական տարվա փակման արարողությունը:

Հանդիսությունը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, հոգեւոր-կրթական հաստատու-թյունների տեսչական, ուսուցչական անձնա-կազմը եւ ճեմարանի սաները:

Միջոցառումը բացվեց Տերունական աղոթ-քով, որից հետո հնչեցին Հայաստանի Հանրա-պետության եւ ճեմարանի օրհներգերը: Այնու-հետեւ բացման խոսքով հանդես եկավ Գեւոր-գյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Տեսուչ հայր սուրբը ներկայացրեց ուսումնա-կան տարում ճեմարանի կյանքում արձանագ-րված ձեռնդրումները, որոնց թվում՝ ճեմարանի կայքէջի եւ տեսակավառակի տեղեւումը, «Էջ-միածին» երգչախմբի հոգեւոր համերգների կազմակերպումը Մոսկվայում եւ Գորդոնովում, արտադասարանային տարբեր դասախոսու-թյունների ու միջոցառումների անցկացումը արտասահմանյան եւ Հայաստանի մի շարք քուների դասախոսների կողմից, ճեմարանա-կանների դասակարգությունը տարբեր սոցիալա-կան ծրագրերի ու մշակութային ձեռնարկների: Գեմարանի տեսուչը կարեւոր ձեռնդրում նկա-տեց տարեկան լինելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությամբ եւ ՀՀ կառավարության հաս-տատմամբ ճեմարանում բացված ապրիլա-նուարի փաստաթղթային ու ծրագրային Նա-խագահատնական աշխատանքների ավարտ-ը, նաեւ Հոռնի Արեւելյան համալսարանի հետ սկզբնավորվող համագործակցությունը:

Տեղեկացվեց, որ անցնող՝ 2016-2017 ուսում-

նական տարում ճեմարանն ունեցել է 94 ուսա-նող, որոնցից 10-ը՝ շրջանակարտ, հաստատու-թյունում դասավանդել է 63 դասախոս՝ 37 աշ-խարհական եւ 26 հոգեւորական:

Իր հաշվետու խոսքում հայր Գարեգինը նաեւ անդրադարձավ հոգեւոր հաստատության ա-ռաքելությանը՝ նշելով. «Գեմարանական կյա-նքում եթէ մի բան պիտի տվորեն մեր սաները, ապա դա ի Քրիստոս առաքելագործության մեջ միասնականությունն է՝ հոգեւոր անանց ճշ-մարտության փնտրողների ճանապարհին: Հն-դոսին՝ հոգեւոր կրթության շնորհիվ ստանում ենք լուսավորւն ու բարին, սուրբն ու հավիտե-նակություն մեղքից ու անցողիկից գաղտնիքից: Կաթողիկոսները եւ խոնարհությունը՝ ճեմարանում միտված է մարդկային աստվածաստեղծ լավագույն որակներին ի հայտ բերելուն մեր սա-ների մեջ: Նրանց ուսուցանելու, որ ամեն բանի մեջ նախ եւ առաջ գերադասելի են արդարու-թյունը, խիղճախոյունը եւ խոնարհությունը»:

Տեսչական ու դասախոսական կազմի անու-նից հայր սուրբը շրջանակարտ սաներին մար-թնեց, որ Քրիստոսը միշտ աներեւութապէս ու-ղեկից լինի նրանց իրենց կյանքում եւ գործե-րում՝ գինելով վերջիններիս խնայողությունը:

Ապա երաժշտական կատարումներով հան-դես եկավ ճեմարանի երգչախումբը՝ ղեկավա-րությամբ Աթոռի սրկ. Կարոսյանին: Ուսանող-ության անունից խոսք ասաց 2 լսարանի սան Անդրանիկ սրկ. Միխայելը:

Հանդիսության ընթացքում Գարեգին Բ Ամե-նայն Հայոց Կաթողիկոսն ուսման մեջ դրսեւ-րած բարձր առաջադիմության, կարգապահու-թյան եւ այլ արժանիքների համար հատուկ պարգևների արձանագծեց տարբեր լսարա-նի սաներին:

Շարունակությունը՝ էջ 3

Թրբանձյան ընծայարանի հիմնանորոգված մասնաշենքի բացումը

Հունիսի 19-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայ-րագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախագահությամբ տեղի ունե-ցավ Հառիճի վանքում գործող Թրբանձյան ըն-ծայարանի հիմնանորոգված մասնաշենքի բացման արարողությունը: Ընծայարանը վե-րանորոգվել եւ գործում է տեղի տիկին՝ Տե-րալու եւ Փատրիսիա Թրբանձյանների (Լուս Ան-շէն, ԱՄՆ) ազնիվ բարերարությամբ:

Արարողությանը ներկա էին Ըրիակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը եւ Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոս-ներ, Աթրիկի թեմի առաջնորդական տեղա-

եւ դաստիարակված սերունդ ունեւան է, ին-չին եւ նպատակաւորված է եղել Թրբանձյան ընծայարանի հիմնադրումը՝ Հայոց Հովվապե-տի կողմից 2012 թվականին: Գեւորգ սրբա-զանն ընդգծեց, որ ընծայարանն արդեն իր ար-ժանի տեղն է գրավել Մայր Աթոռի հոգեւոր-կր-թական բարձրագույն հաստատությունների շարքում՝ անցած տարիների ընթացքում տա-լով հիսունից ավելի շրջանակարտ, որոնք հա-մալուել են ինչպէս հոգեւոր, այնպէս եւ աշ-խարհիկ կրթօջախները: Երախտագիտութեւն հայտնելով բարերարների ընտանիքին՝ վերա-տեսուչ սրբազանը շնշտեց, որ նրանք իրենց



պահ Նարեկ վրդ. Ավագյանը, Մայր Աթոռի միաբաններ, Ըրիակի մարզպետ Աթոռի հա-ւատարման, Աթրիկի բաղաջապետ Միխայ-ր Կարազանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ այս առիթով Հայաստան ժամանած բարերարների զավակ-ներ Լորի Մելքոնյան, Փոլ ու Հարրի Թրբա-նձյանները եւ Թրբանձյան ընտանիքի այլ ան-դամներ:

Այցը Հառիճի ընծայարան սկսվեց հուշա-տախտակի բացմամբ, որից հետո պատմա-կան վանքի Ս. Աստվածածին եկեղեցում Վե-հափառ Հայրապետի գլխավորությամբ մա-տուցվեց գոհաբանական աղոթք: Տաճարում

գործով բարի օրինակ են ծառայում հետագա սերունդներին: Նա վստահեցրեց նաեւ, որ Նո-րոգված մասնաշենքը լավագույն կճառայի ընծայարանի կարիքներին:

Այս առիթով իր ուրախությունն արտահայ-տեց նաեւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջ-նորդ Հովհան արք. Տերտերյանը՝ նշելով, որ շնորհիվ Ամենայն Հայոց Հայրապետի ջանքերի եւ Թրբանձյան ամուրի առատաձեռնության, այ-սօր ամենքն ակնատես են Հայ եկեղեցու կյանքում կարեւոր եւ պատմական իրադար-ձության: Վկայելով Թրբանձյան ընտանիքի նվիրյալ կյանքի, հավատարմի ու մարդասեր ո-գու, ինչպէս նաեւ Ս. Էջմիածնի նկատմամբ



ներկայիս ողջունեց Աթրիկի թեմի առաջ-նորդական տեղապահը՝ ուրախություն արտա-հայտելով, որ կյանքի եւ կոչվել Հայոց Հայրա-պետի երեմնի տեսիլքը, եւ բարերարների նա-խանձախնդիր աշխատանքի ու նվիրատվու-թյան շնորհիվ եկեղեցին եւ հարակից շինու-թյուններն այնպէս վերակենդանացել եւ ապ-րում են:

Այնուհետեւ վանքի շրջափակում հյուրերին ազգագրական եղբերի ու պարերի կատարում-ներով դիմավորեցին Մայր Աթոռի եւ ՀԱԵՄ-ի հովանւո ներքո գործող Երեւանի Նոր Նորքի, Արաբկիրի եւ Գյումրու հայրողայա տներին սա-ները:

Տարածքում կատարված շրջայցից հետո, Ա-մենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագա-հությամբ, Նորոգված մասնաշենքում կատար-վեց օրհնության կարգ:

Արարողության ավարտին ամենքին ողջու-նեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր-կրթա-կան բարձրագույն հաստատությունների վե-րատեսուչ Գեւորգ եպս Մարոյանը: Սրբազանը նշեց, որ հայ ժողովրդի ինքնութեւն պահպա-ման գործունեից ամենակարեւորը կրթված

նրանց սիրո մասին՝ Հովհան արքեպիսկոպոսը նշեց, որ ազգի կյանքն առավել հարատեւ է դառնում, երբ ուշադրություն է դարձվում ազգի դաստիարակությանն ու կրթությանը: Սրբա-զանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ազգագույն այս իրագործման՝ ընծայարանի հաստատման առիթով եւ մար-թնեց, որ Նորին Աթոռից երկար ու քաջա-ռողջ հովվապետությամբ կյանքի կոչի իր բոլոր երազներն ու պատւամեները՝ ի պայծառություն Հայոց եկեղեցու եւ ազգի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ բարերար-ների ընտանիքին ողջունեց նաեւ Ըրիակի մարզպետ Աթոռի հաշտարման կարեւոր-վով կրթական հաստատության ղեղն ու նշա-նակությունը մարզի եւ ողջ Հայաստանի հա-մար: Մարզպետը վստահություն հայտնեց, որ ընծայարանը կշարունակի պատրաստել գի-տակ եւ հայրենասեր երիտասարդներ, որոնք իրենց արժանի ներդրումը կունենան թե՛ հոգե-ւոր, թե՛ աշխարհիկ ասպարեզներում, կերե-ման եւ կօգնեն պահպանել ազգային ար-ժեքները, հավատքը եւ հայոց ինքնությունը:

Շարունակությունը՝ էջ 3

**«Կրօնը եւ բնապահպանությունը» թեմայով
հանդիպում-քննարկում
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում**

Հունիսի 28-ից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Հայք եւ Թաւրոս Մատուկան» մասնաճեղքը կ'աշխատէ տնտի ունեցող «Կորու եւ քաւաքապիւսկալուք» թեմայով հայ-իրանահայ հաւորեալու-քննարկում՝ կազմաւորելով ՅԻ՝ հայաստանական միջնեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի կողմից՝ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերութիւնները բաժնի եւ ՀՀ-ում իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանատան մշակութային կենտրոնի հետ համագործակցութեամբ:

Քննարկմանը բացման խոսքերով
հանդես եկան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

նը, որ բոլոր կրոնները պարտավորեցնում են իրենց հետեւորդներին պահպանել բնությունը՝ իբրեւ Աստծո արարչագործություն:

Իր հերթին ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակութային կցորդ Մաքիդ Մեշքին համը կրպուրմ նկատեց հայ-իրանական միջկրոնական երկխոսության կարելոր բալլ և հույս հայտնեց, որ ընդհանուր մտահոգիչ հարցերի շուրջ նման քննարկումները տեղի կունենան պարբերաբար և կենսական երկխոսության բարի մի աճանդույթ:

Ապա օրվա թեմայի շուրջ բանախոսեցին Երեւանի պետական համալսարանի



արտաքին հարաբերությունների եւ առարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Յովհաննիսյանը, «Կոյր սեղան» հիմնադրամի գործադիր տնօրէն Կարէն Նազարյանը եւ Յայաստանում ԻԻԻ դեսպակատարն մշակութային կցորդ Մաջիր Մէշքիս:

Նաթան սրբազանն իր ողջույնի խոսքում ներկայեցրեց փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրելին Բ Ճայրազույի Պատրիարքը եւ կմեստին Դայոյ Կաթողիկոսի գլխատանքն ու բարեմաղթանքները եւ երախտագիտութիւն հայտնեց հայ-իրանական հանդիպում-քննարկման կազմակերպիչներին:

Սրբազան հայրը կարեւորեց նման քննարկումները, որոնք նպաստակ են հետապնդում նպատակ տարածաշրջանային բնագծային քաղաքականության մշակույթի զարգացմանը, ուրուրում առկա խնդիրներին արժեքները: Նախքան արեւելախիկոպոլսո մասնագիտությամբ կեչք, որ մարդկանց կողմից բնութային չարաշահումն ու շահագործումն են դրանից բխող հետեւանքները սահմանելու չեն ճանաչում, ինչն անհանգեւորություն է առաջացնում տարածաշրջանում, այդ թվում նաեւ՝ Հայաստանում: Սրբազան հայրը մասնավորապէս րնդեց ն ու հաստատեց այն իրողությունը, որ

Էկոլոգիայի և բնության պահպանության
աճիքի միջոցով, կենսաբանական գիտ.
թեքնածառն էլիզ Դոկիանիսյանը («Մար-
դու և բնության փոխազդեցությունը և
փոխկախվածությունն ժամանակի սեջ») և թեմ-
րանի գիտություն և մշակույթի համա-
սարանի ռեկտոր, մշակույթի գերագույն
խորհրդի («Մշակույթ, արվեստ և ճարտու-
րապետություն») հանձնաժողովի քար-
տուղար, դոկտոր Մոհամմադիսյան Իմա-
նի հաշիվում («Կրոնական գրագաղթու-
թյուն, մարդ և բնություն»):

Հանդիպման երկրորդ նիստին զեկույցներով հանդես եկան Իրանի կրոնագետները՝ զերգադուլես Խոխրդիի քարտուղար Ե. Շիազիստության համաշխարհային կոնգրեսի նախագահ Գոլուրդ Ալթաթ Փեյման («Զբոսաշրջություն, բարոյականություն, խաղաղություն եւ բարեկամություն») եւ Մայլ Աթորի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրէն, Տակուշի թեմի առաջնորդ Բազարա Տեպա Գալստամանը («Արարչագործության հետ ներդաշնակ»):

Ձեկուցողները լաեւ պատասխանեցին
ներկաների հարցերին, ներկայացրեցին
անհրաժեշտ պարզաբանումներ: Վերջում
կատարվեց քննարկված նյութերի ընդհա-
նուր ամփոփում:

Գեղորդյան հոգեւոր ճեմարանի 2016-2017 ուսումնական տարվա փակման արարողությունը



ՍԿԻՂԲՆ՝ էջ 2

Յերեկոյթն ամփոփվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա
Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոսի օրհնության խոսքով:

Նորին Մրբությունն իր գոհունակությունն արտահայտեց ուսումնական տարվա ընթացքում Մայր Եկեղնիքի հոգեներ լրթական հաստատությունների արձանագրած հաջողությունների և ձեռքբերումների առիթով՝ իր վախճաարանը բերելով Գեորգյան հոգեներ ձեմարանի, Մեսանի վազգեյան հոգեներ դպրանոցի և Թրբանճյան ընծայարանի տնչական և դասախոսական կազմերին՝ ներդրված նվիրյալ ջանքերի և ջանարի գործունեության համար:

Իր պատգամում Հայոց
Հովվապետը նշեց, որ ժո-
ղովրդի հոգեդուր սպասա-
վորության համար պարո-
րաստվող եկեղեցականնե-
րը պետք է կորոզ լինեն
լավ մարդու, լավ հայի և լավ քաղաքացու հատկա-
նիշներ:

Ըստ այդմ՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ ճեմարանը կոչում ունի նախ մարդակերտումի. մարդ, որ կրողն է Աստծու պատկերի, ով նմանվում է մեր Տիրոջ՝ Հիսուս Զրիստոսին, եւ առաջնորդում Նոր աստվածաբաններով ու աստղաբաններով:

Հոգեւոր հաստատության երկրորդ կոչումը Նորին Սրբութիւնը նկատեց մանկավարժերի և տեսչի պատկերացումների հայտնաբերման համար, որպէսզի ճշմարտի սանտեսը, հարկոր դառնալով ազգային պատմութեանը, հայերի սրբազան ծառանդութեանը ու հերոսական կերպարների, նրանց օրինակով ու ծառայակիւրծի ուժով հարթեանալով կերտեն ինչպէս հոգեւոր, այնպէս և աշխարհիկ կյանքում, կարող լինես նկատեստելու հայաստահայկականութեան սրբազան գործի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարելուր նկատեց
կաել, ոո ճեմադասի շոջակամադուկեոն ուկեմաւ

Բաղաբացիական բարձր գիտակցություն, պատասխանատվության եւ օրինապահության ոգի՝ իրեն արժանավոր եկեղեցականներ ժողովրդին պահելու Աստուծո չափիկներն մեզ եւ ազգային կյանքն առաջնորդելու սիրո, բարության, արդարության եւ խաղաղության մեջ:

Խոսքն ուղղելով շրջանավարտ սարկավագներին՝ Նորին Սրբությունը մասնավորապես ասաց. «Մենք մեծապես ուրախ ենք, որ այս տարի են ունենք շրջանավարտներ, ովքեր մուտք են գործելու իսրաբանական կյանք են իրենց ամբարձրած գիտելիքներն ի սպաս են բերելու իրենց ծառայադրույթյան մեջ մեր ժողովրդին և Սուրբ Եկեղեցուն: Վստահ ենք, որ մեր շրջանավարտները կարողացան են ինչպես մակակարծություն, այլպես էլ տեսչության և մեր Կաթոլիկոսի սպասուամերին ու հույսերը են ավելիով կապաստեն մեր Եկեղեցու վարկի ու հեղինակության բարձրացմանը: Բարի օրերացք ենք մղղուծմով տրանք՝ իսրաբանական Մեր կյանքը»:



Եւ արդյունավոր ծառայություն՝ ի սեր եւ ի փառս
մեր ժողովրդի ու Եկեղեցու»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը փոխանցեց լաւե մաղցյալ ճմաբանականներին՝ հորդորելով բարձր գիտակցութիւն ուրստելու ուսումնառութան մէջ եւ ամենայն ջանք ի գործ դնել՝ իրենց անձերը պատրաստելու այն մեծ առաքելութեան, որին կոչված է Հայաստանայայ Առաքելական Ս. Եկեղեցին:

Կերթում Գարեգին Բ Յայոպատը մաղթեց, որ Տերը միշտ պայծառ պահի Յայոց Եկեղեցին և արդյունավորի նրա առաքելությունը: Ամենայն Յայոց Գարոնիկոսը նաև հայեց երկնակյան օրհնությունը աշխարհափափու հայոց ազգին և հայրենի երկրին, որ միշտ լինեմ Աստծո սուրբ Աջի հովանու ներքև և ապրեն խաղաղության և բարօրության մեջ:

Ճեմարանի ուսումնական տարվա փակման հանդիսությունն ավարտվեց հայրապետական Պապանիչ աղոթքով:

Թրբանձյան ընծայարանի հիմնամորոգված մասնաշենքի բացումը



Ստորագրել է՝ 2

Բացման արարողությունն ամփոփվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը փառք վերառաքեց առ երկնավոր Տերը, որ իր շնորհները հեղեղ է հիսնավորոյ

վանական համալիրի վրա, եւ խորհրդային անաստվածության տարիներից հետո հնամենի տաճարում հավատավոր հայրերին երբ վերստին կարողանում են իրենց աղոթքը բարձրացնել առ Կստմոյ:

Վեհափառ Հայրապետը գոհու-
նակությամբ արձանագրեց, որ Ջե-
րալդ ի Բատրիքիսն Թրքսոյնյան-
ների աջակցությամբ տարիներ ա-
ռել հնարավոր դարձած իրագործ-
ելու վանական համալիրում նաեւ
կրթական կայանը վերականգնելու
ծրագրերը: Հայոց Հովվապետը
հաստատեց, որ ընծայարանի կր-
թական գործունեությամբ իրենա-
վարեց վանական համալիրը վերս-
տին կծաղկի ու կպայծառանա, ին-
չը գարկ կտա նաեւ վանական
կայանին:

Նորին Մարութիւնը ներկաներին տեղեկացրեց, որ ընդարձակ ծրագրի հաջորդ փուլում կկատարուին վաղեմի նորոգութիւնը եւ տարածքի բարեկարգումը, միաժամանակ ընծայարանի համար կկառուցվի նաեւ հանրակացարանային նոր մասնաշէնք՝ հնարավորութիւն ընձեռելով ընդարձակել աշակերտներ թիվը:

Այս առիթով Ամենայն Հայոց
Կաթողիկոսն իր գնահատանքը
յիշխակցեց ուսերգող՝ Թորոս-



ճյաև ընտանիքին՝ դրսևերաճ հաևնաաաության ու ախաևնախաև կրության հաճախ: Կեախաաա Զայրապաաևի կր օրհաևությանը բերելու աաև ԱՄՆ հայաց աբաևաաաևա թեմի աաաաևորդիև, ընճայարաևի տեղադրաևը եև կատարվաճ աշխատաևըեերիև կրեթև գործուև մասաևակալալալուև բերաճ քալալ:

հոգեւորականներին եւ աշխարհականներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով իր օրհնությունը բաշխեց ներկաներին:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

«Ջայը», «Ջայն ու հայը» ծանոթ եմ:

Կա նաեւ հայի հայը՝ խորքինը, իսկականը:

Չայ մարդը հայ մարդու հանդիպելու, որտեղ էլ լինի, հայրենիքում թե սփյուռքում, տանը թե օրտնում, սրճարանում թե փողոցում, առաջին ու վերջին խոսքը միշտ լինում է հայրենիքի մասին: Իրարից այնպես են լուրեր հարցնում, կարծես ուր որ է կորցնելու են ծանր հիվանդ մի թանկ հարազատի: «Ի՞նչ կա, չկա», հարցնում են մեկը մյուսին, եւ բացվում է զրույցի կծիկը: Խոսում են ու խոսում, եւ խոսքի ամփոփումը գոյություն ունի: «Չէ՛, այս երկիրը երկիր չի դառնա»: Այսինքն՝ ծանր հիվանդը չի ապաքինվում: Իսկ եթե ծանր հիվանդը չի ապաքինվում, ուրեմն... չեմ ուզում ամենավատ բանն օգտագործել... ուրեմն մի կերպ գոյատևում է:

Եվ այսպե՛ս՝ Մովսես Խորենացու «Այսպե՛ս»-ից սկսած մինչեւ 1915 թվականը, մինչեւ... անկախության 20-ամյակ:

Չայը եւ հայի հայը տարբեր են: Ամեն մի հայ չէ, որ անկախանք կարող է եւս թաքնել ազգայինը: Չայաստանը միշտ էլ մնացել է այն հայերի հույսին, ովքեր գիտակցաբար պաշտպանել են ազգային արժեքները՝ մայրենի լեզուն, Արարատի պատիվը, պատության մոխիրներից փորձել են գտնել ժողովրդին ոգեպնդող անթելոված կրակը: Ահա այստեղից էլ՝ ոչ թե սոսկ հայը, ով պայմաններից դրոշմված կարող է հեռանալ



ազգային արժեքներից եւ մտնել ուրիշների ստեղծած ապահով արժեքների մեջ, այլ հայի հայը՝ ավելի խորացած, ավելի պատասխանատու իր ազգային արժեքների հանդեպ եւ ճակատագրին ընդառաջ:

Չայը կհեռանա իր հայրենիքից, լեզվից, պատմությունից, մեկ սերնդի կյանքի տեսողությամբ կդառնա հեռակա հայրենասեր, հետո կընտելանա նոր պայմաններին, կխոսի ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն... կվերածվի սովյալ երկրի ծրագրան քաղաքացու եւ կամաքի հիշել, որ ինքը ծագումով հայ է: Մինչդեռ հայի հայը կտոկա, որովհետեւ նրա տեղն իր հայրենիքում է, նրա նպատակը

լիարժեք հայն է ու ամուր Չայաստանը:

Չայից մինչեւ հայի հայն ընկած ճանապարհին, որը ոչ թե տարածություն չափող կիսմետրերով է հաշվվում, այլ գիտակցական խորությամբ, մենք որակապես պետք է վերափոխվենք, այսինքն՝ ճշտվենք, շտկվենք, ուղղվենք...

Ամբողջ միջնադարում մեր մատենագիրները նույն էին աղաղակով. մենք հեռացել ենք ճշմարիտ ճանապարհից՝ դրանով էլ պայմանավորված են մեզ պատուհասած աղետները: Աղետների ազգային ողբերգություններն էին, որոնց դառնակված գույժը մեզ էին հասցնում իրենց

ժողովրդի ցավից ճենճերացող եւ այդ ցավը պատմության դարձնող պատմագիրներն ու ժամանակագիրները՝ բոլորն անխտիր, անուն առ անուն, մատյան առ մատյան...

Մենք շեղվեցինք ճշմարտությունից, կորցրեցինք մեր բնական հավասարակշռությունը, թեքվեցինք եւ, ինչպես սյուն, տապալվեցինք, փշուր-փշուր եղանք: Չեռացանք ինքնետու մեզից, դարձանք ուրիշ: Մեր ընկած տեսակը սկսեցինք չսիրել, սկսեցինք մենք մեր անկյալ վիճակից խորշել եւ հեռանալ ու հեռանալ՝ ինքներս մեզից: Մտանք ուրիշի, անգամ թշնամու ապահով պետության, գործող լեզվի, մինչեւ իսկ՝ հավատի մեջ, օտարացանք, դարձանք ուրիշ, երբեմն նաեւ մեր տեսակին թշնամի:

Սյունն այդպես էլ ընկած մնաց...

Մեր ազգային անկումը դարձավ հայի մեր կերպարի խաթարման պատճառ, ձեւախեղձան նախադրյալ, եւ մեր նմանների գավակները, ապահովությունը եւ արժանապատվությունը որոնելու հեռանկարով, հեռացան Արարատից: Չեռացան, հեռացան եւ դեռ հեռանում են: Մենք, որ բանակապես պիտի աճեինք ու շատանայինք մեր հայրենիքում, չաճեցինք ու չշատացանք, որովհետեւ կանաչ ոտը ծիլ էր տալիս

ուրիշի դաշտերում՝ ծաղիկն ու պտուղը թողնելով այնտեղ: Մենք մեր սերունդների տվեցինք ուրիշներին: Դարձանք ամառվա ցամաքող գետ:

Եվ այսպես՝ դարեր շարունակ՝ Բյուզանդիայի հայահալած քաղաքականությունից սկսած, որ արքայատոհմներն ու նախարարական տները կտրում էր հայրենի հողից եւ վերաբնակեցնում իր երկրի արեւելյան տարածքներում, մինչեւ թաթար-մոնղոլներ եւ թուրքեր, որոնք եկան, եկան ու նստեցին մեր հողերի վրա, տարան մեր աղջիկներին, կերան մեր հացը եւ ամեն ինչ ավարտեցին 1915 թվականի ցեղասպանությամբ ու հայոց հայրենիքի բռնագրավումով:

Ողբեսգի այսուհետ մեր երկրում աճեց քանակապես, որպես ժողովուրդ պետք է որակապես փոխվենք՝ ճշտվենք: Որակապես ճշտված, ճշմարիտ հայի կողքին կկանգնի արժանավոր մյուս հայը եւ ոչ թե ամոքիչ կեռասնա: Այսպես աստիճանաբար որակը կդառնա քանակ: Չակառակ դեպքում քանակն այլեւս չի դառնա զվաքանակ:

Իսկ դրա համար այսօր, առանց հապաղելու, մեզ անհրաժեշտ է ստեղծել ազգային առողջացման ծրագիր: Մեր փրկության միջուկն առողջ հանրային կառույց ձեւավորելն է: Տապալված սյունը միմիայն այդ ճանապարհով կարելի է բարձրացնել ու կանգնեցնել:

Շարունակությունը՝ էջ 5

Եվթանագիայի Ֆենոմենը եւ նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները

Սկիզբը՝ թիվ 10-11

1981 թ. Չամաշխարհային բժշկական փիրոսան 34-րդ համաժողովի կողմից ընդունված Չիվականի իրավունքների մասին Լիսաբոնյան հռչակագիրը, որտեղ այլ դրույթների հետ մեկտեղ՝ տեղ գտավ հիվանդի արժանապատվությունը մեռնելու իրավունքը: Այս դրույթը, փաստորեն, բարոյապես արդարացնում է «մահվան իրավունքը»: Եթե բարոյապես արդարացնենք «մահվան իրավունքը», եթե օրենքի ուժ տանք այդ նորմին, արդյո՞ք դա չի նշանակի, որ օրենքը ժխտում է օրենքը:

Գոյություն ունի արժանապատիվ, առանց տառապանքների մեռնելու իրավունք: Խոսքը մարդկային արժանապատվությունը հարգելու մասին է: Սակայն այդ իրավունքը չի ժխտում կամ չի վերացնում կյանքի պահպանման մասին օրենքը: Մահը մարդկային կեցության անբաժան տարրն է՝ իր բոլոր հետեւանքներով: Արժանապատիվ ապրելու եւ մեռնելու իրավունքը բոլորովին չի նշանակում միայն մեռնելու իրավունք, այն ներառում է նաեւ մարդասիրական եղանակներով բուժում ստանալու իրավունքը: Նման բուժումը պետք է ավարտվի միայն բնական մահով, ընդ որում՝ առանց արհեստական շահարկումների:

Շվեդիայում եւ Ֆինլանդիայում չնայած պատիվ էվթանագիան հակաօրինական գործողություն չի համարվում, այդուհանդերձ, այդպիսի որոշում կայացնելու համար պահանջվում է միայն հիվանդի ազատ եւ գիտակցված կամքի արտահայտումը (գրավոր):

Աշխարհի երկրների գերակշիռ մասի բժիշկների եւ իրավաբանների մեծամասնությունը գտնում է, որ էվթանագիան ոչ միայն երդմանակցություն է, այլեւ քրեական հանցագործություն: Այն բացարձակապես անթույլատրելի է, եթե նույնիսկ իրականացվում է «խղճաբարության» կամ «գթասրտության» նկատառումներով:

Չայաստանի Հանրապետության «Բնակչության սանիտար-համաճարակային

անվտանգության ապահովման մասին» 1969 թ. ընդունված օրենքի 23-րդ հոդվածում, որը վերնագրված է «Եվթանագիայի արգելում», հստակ, սեռով սպիտակի վրա գրված է (եւ փա՛ռք Աստծո, որ նման օրենք ունենք). «Չայաստանի Հանրապետությունում արգելվում է էվթանագիան. հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը ուժեղ գործողությամբ եւ միջոցներով: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրոշմ են էվթանագիայի կամ իրականացում են այն, կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Այսօր Ռուսաստանի Դաշնությունում օրենսդրություն արգելված են էվթանագիայի բոլոր ձևերը: Ռուսաստանի Դաշնության Զողաքացիների առողջության պահպանման մասին օրենսդրության հիմունքների 45-րդ հոդվածում գրված է. «Բժշկական անձնակազմին արգելված է էվթանագիայի իրականացումը»:

Նման իրավիճակ արձանագրված է նաեւ եվրոպական երկրներում, որտեղ էվթանագիան ոչ միայն արգելվում, այլեւ դատապարտվում է քրեական օրենսգրքով: Օրինակ՝ Գերմանիայի Դաշնության քրեական օրենսդրությամբ «հիվանդի խնդրանքով սպանություն» իրականացնելու համար տրվում է 6 ամսից մինչեւ 5 տարի ազատազրկում:

Անգլիայում ընդունվել է օրենք, որով բժշկական պրակտիկայում արգելվում է էվթանագիայի ցանկացած տեսակ: Ինքնապատվության աջակցող որակված է որպես քրեական հանցանք եւ դատապարտվում 14 տարվա ազատազրկման:

Մեծ Բրիտանիայում երկու օրենք է գործում, որոնք անուղղակիորեն ուղղված են էվթանագիայի դեմ: Խոսքը վերաբերում է 1965 թ. ընդունված «Սպանության մասին» եւ 1961-ին՝ «Ինքնասպանության մասին» օրենքներին: Սպանության մասին օրենքը նախատեսում է, որ հիվանդի կանխամտածված սպանությունը՝ կարեւորագույն, խղճահարությունից, գթասրտությու-

նից եւ այլ մղումներից դրված, համարվում է հանցագործություն:

Ինքնասպանության մասին օրենքով՝ Անգլիայում վերացվել է դրա քրեական կարգավիճակը: Այդ կարգավիճակը պահպանվում է, եթե ինքնասպանությունն իրականացվում է բժշկի օգնությամբ:

Արեւմուտքում առաջարկվում են էվթանագիայի բարոյական գնահատման բազմաթիվ տարբերակներ: Չեղիմակների մեծամասնությունը պաշտպանում է պատիվ էվթանագիայի մեթոդները՝ հերքելով ակտիվ էվթանագիայի կիրառման ցանկացած հնարավորություն:

Սակայն գոյություն ունի եւ ուղղակիորեն հակադիր տեսակետ: Այսպես, ամերիկացի փիլիսոփա Ջ. Ռեյգելը հանդես է եկել Ամերիկյան բժշկական ընկերակցություն 1973 թ. ղեկավարների 4-ի որոշման քննադատությամբ. «Մարդկային էակի կողմից մեկ ուրիշի կյանքի կանխամտածված դադարեցումը բարեգուր սպանություն է»: Այս դրույթը հակասում է բժշկական մասնագիտության եւ Ամերիկյան բժշկական ընկերակցության քաղաքականությանը, սակայն Ջ. Ռեյգելը գտնում է, որ եթե հիվանդը պահպանել է իր գիտակցությունը, հասկանում է, որ իր օրերը հաշված են, չի կարող այլեւս դիմանալ տարափելի ցավերի եւ բժշկին խնդրել է, որ նա արագացի իր մահը, ապա բժիշկը մարդասիրություն է դրսեւորում, երբ դադարեցնում է իրականի տառապանքները: Այո՛, «մարդասիրական» միտքը շարունակում է ապրել «ոչ լիարժեք» կյանքի ոչնչացում: «Եվթանագիա» հասկացության նման չարագուշակ մեկնաբանությունը հետագայում լայն տարածում գտավ Ֆաշիստական Գերմանիայում, որտեղ մշակվեց անգամ մի ողջ ծրագիր:



Դրա մասին հայտարարվել է 1933 թ. հուլիսի 14-ին «Ազգի առողջության պահպանման» հռչակագրում, որի հեղինակներն էին հանրապետական Ռոզենբերգերն էր՝ իր աշխատական գաղափարախոսությամբ: Հռչակագիրը բաղկացած էր 3 կետից՝ ա. անբուժելի հիվանդների ոչնչացում, բ. հատուկ գործողություններ ոչնչացում, գ. գանգալծային ամպցում:

Հավանություն տալով էվթանագիային՝ որպես անհուսալի հիվանդ արհացիների բացառիկ արտոնություն, 1939 թ. սեպտեմբերին Դիտլերը ստորագրեց գաղտնի հրամանագիր, որի համաձայն՝ «կյանքի բոլոր ձևերը, որոնք անարժան են կյանքին» հարկավոր է ենթարկել էվթանագիայի: «Անարժանության» հարցն ամեն կոնկրետ դեպքում որոշվում էր բժշկական «եռյակի» կողմից: Դրա հետեւանքով, ամենատարբեր աղբյուրների համաձայն, երկու տարվա ընթացքում ոչնչացվեց 100 հազարից մինչեւ 275 հազար մարդ: Նյուրնբերգի միջազգային գինկոդական դատարանն այդ գործողությունները որակեց որպես մարդկության դեմ կատարված ճորագործություն:

Ռուս բժիշկ, պրոֆեսոր Ս. Յա. Դոլեցկին գտնում է, որ «պայքարը հիվանդի կյանքի համար արդարացված է մինչեւ այն պահը, երբ փրկության հույս կա: Եթե այն կորսված է, ծագում է գթասրտության խնդիր, որն էլ դրսեւորվում է էվթանագիայի մեջ»: Ս. Յա. Դոլեցկին հավելում է, որ էվթանագիան արդարացված է անբուժելի հիվանդների, նազմաւալույժ մարդկանց նկատմամբ, որոնք ապրում են միայն կենսապահովման սարքավորման օգնությամբ: Նույնը վերաբերում է ատրոֆիայի ենթարկված ուղեղ ունեցող նորածններին եւ այլն:

Շարունակությունը՝ էջ 7

